ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ե 40/11-3321
«10» 06 2025 թ.

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+ 374 10) 44-34-80, (+ 374 60) 37-26-56
Հեռ.՝ (+ 374 10) 44-29-04, (+ 374 60) 37-77-37

**«ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ՝
ՊԱՐՈՆ ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

ՀՎՀՀ 06975627
ՀՀ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Խորենացի փողոց, շենք 2
հեռ. 093-56-58-48
էլ.հասցեն՝ firm2025@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «Բեսթ Ֆիրմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 08.04.2025թ.-ին՝ կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար ապրանքներ մատակարարելու վերաբերյալ», որի ընդհանուր գումարը կազմել է 187.200 ՀՀ դրամ:

Կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31» ծածկագրով Պայմանագրի շրջանակներում «Բեսթ Ֆիրմ» ՍՊԸ-ի կողմից, 04.06.2025թ.-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն, գրություն է ստացվել այն մասին, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31» ծածկագրով կնքված պայմանագրի շրջանակներում ապրանքի մատակարարումն իրականացնել հնարավոր չէ՝ տեխնիկական խնդիրների պատճառով և վճարվելու են որակավորման և պայմանագրի ապահովումները, որպեսզի «Բեսթ Ֆիրմ» ՍՊԸ-ն չներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ եմ համարում տեղեկացնել, որ Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանի խախտում, մասնավորապես. ըստ պայմանագրի՝ «Բեսթ Ֆիրմ» ՍՊԸ-ն պարտավորվել է, մինչև 2025թ.-ի մայիսի 26-ը, մատակարարել սեղան ղեկավարի ընդամեը 2 հատ, որի ընդհանուր գումարը կազմում է **187.200 ՀՀ դրամ**:

Արդյունքում՝ «Բեսթ Ֆիրմ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ խախտվել է ապրանքների մատակարարման ժամանակացույցն, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2025թ.-ի հունիսի 10-ին, միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Բեսթ Ֆիրմ» ՍՊԸ-ի միջև 08.04.2025թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31» ծածկագրով պայմանագիրը՝ 187.200 (հարյուր ութսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով,** ինչպես նաև պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում եմ, որ «Բեսթ Ֆիրմ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900001008375 հաշվեհամարին փոխանցել **936 ՀՀ դրամ**՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 10.06.2025թ. և **936 ՀՀ դրամ**՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ «Բեսթ Ֆիրմ» ՍՊԸ-ն, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե Վաճառողը չի վճարում պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **20.000 (քսան հազար) ՀՀ դրամ**, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ**, որն անհրաժեշտ է

վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2025թ.-ի հունիսի 18-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **20.000 ՀՀ դրամ՝** պայմանագրի կատարման ապահովման և **30.000 ՀՀ դրամ՝** որակավորման ապահովման գումարները, ընդհանուր **50.000 ՀՀ դրամն**, ապա «Բեստ Ֆիրմ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, ինչպես նաև տույժի և տուգանքի վճարված կտրոնների բնօրինակները, մինչև **2025թ.-ի հունիսի 18-ը** ներառյալ, ներկայացնել ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կենտրոնական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**

Կատարող՝ Տիրան Խաչատրյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին,
Հեռ.՝ 060-37-12-80: